

ՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ



Սույն թվականի դեկտեմբերի 19-ին մեկնարկեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները:

Հոբելյանական միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը (ամբողջական ելույթը տպագրվում է թերթի 2-րդ էջում):

Շնորհավորելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելյանի առթիվ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես ասաց. «Մենք այս դահլիճում բազմիցս առիթներ ունեցել ենք խոսելու Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի փառահեղ ժառանգության մասին, և ուզում եմ ընդգծել, որ մենք դա դիտարկում ենք ոչ թե որպես արձանագրում, այլ ապագայի մեջ ռազմավարական ներդրում անելու անհրաժեշտ, կարևոր և ռազմավարական ակտիվ:

Շատ մեծ կուտակված գիտական պոտենցիալ կա, և իսկական ժամանակն է, ինչքան էլ ուշացած, որ Հայաստանի կառավարությունը լուրջ ներդրումներ անի գիտության ոլոր-

տույնների, գիտական կենտրոնների տնօրեններ, բուհերի ղեկավարներ, պատվիրակություններ արտերկրից, դեսպաններ, ՀՀ կառավարության անդամներ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, գիտական հանրության ներկայացուցիչներ:

Հոբելյանական միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը (ամբողջական ելույթը տպագրվում է թերթի 2-րդ էջում):

Շնորհավորելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելյանի առթիվ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես ասաց. «Մենք այս դահլիճում բազմիցս առիթներ ունեցել ենք խոսելու Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի փառահեղ ժառանգության մասին, և ուզում եմ ընդգծել, որ մենք դա դիտարկում ենք ոչ թե որպես արձանագրում, այլ ապագայի մեջ ռազմավարական ներդրում անելու անհրաժեշտ, կարևոր և ռազմավարական ակտիվ:

Շատ մեծ կուտակված գիտական պոտենցիալ կա, և իսկական ժամանակն է, ինչքան էլ ուշացած, որ Հայաստանի կառավարությունը լուրջ ներդրումներ անի գիտության ոլոր-



տում: Նաև այս գործունե է դերակատարում ունեցել, որ մենք 2019 թ. շարունակաբար ավելացնում ենք գիտության ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետությունում: 2018 թ. համեմատ 2023 թ. գիտության ոլորտի ֆինանսավորումն ավելացել է 151 տոկոսով՝ շուրջ 2,5 անգամ: 2024 թ. արդեն գիտության ֆինանսավորումն ընդունված բյուջեով կավելանա 181 տոկոսով:

Այս համատեքստում շատ կարևոր են համարում ընդգծել այն ծրագիրը, որը վերաբերում է գիտության ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացմանը, որը մեկնարկել է 2022 թ. հունվարի 1-ից և շարունակվելու է մինչև 2026 թ.:

Կարծում եմ՝ չափազանց կարևոր է ևս մեկ նորամուծություն, որ մենք իրականացրել ենք: 2022 թ. գիտնականները և գիտական թիմերը մրցութային կարգով ստանում են դրամաշնորհներ: 2023 թ. այս մրցութային, դրամաշնորհային ծրագրերով շնորհվել է 8.4 միլիարդ դրամի դրամաշնորհ: 2024 թ. պետական բյուջեով դրամաշնորհի ծավալը կլինի 9.3 միլիարդ դրամ:

Ուզում եմ ընդգծել, որ 2024 թ. արդյունքներով այս դրամաշնորհային ծրագիրը կառնչվի շուրջ 1000 գիտնականի: Մեր հաշվարկներով այս ծրագրերի գործարկման արդյունքում Հայաստանում գիտական գործունեությանը զբաղվող մարդկանց թիվը 2022-2023 թթ. ավելացել է շուրջ 296 գիտնականով: Ընդ որում նրանց մեծ մասը 55 տարեկանից ցածր տարիք ունեցող գիտնականներ են»,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ վարչապետը նշեց, որ կառավարությունը Հայաստանի Հանրապետության զարգացումը պատկերացնում է գիտության ոլորտի լրջագույն զարգացումներով և բարեփոխումներով:

«Ինչպես նախկինում չենք պատկերացրել, ապագայում էլ չենք պատկերացնում Հայաստանի Հանրապետությունում առանց զարգացած գիտակրթական ոլորտի, հենց կրթության, գիտության մեջ ենք տեսնում Հայաստանի Հանրապետության ապագայի ռազմավարական պլանավորումն ու ապահովումը»,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Շնորհավորելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելյանի առթիվ՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշեց՝ կրթության ոլորտի բարեփոխումներն են նաև, որ ապահովվելու են գիտության զարգացումը՝ ամբողջացնելով ողջ շրջան հանրակրթությունից մինչև գիտություն: Ժաննա Անդրեասյանը կարևորեց դպրոցներում իրականացվող մեր ծրագրերը, որոնք ուղղված են երեխաների շրջանում գիտության տարածմանը: Նա անդրադարձավ «Հայկական համադպրոցական գիտության փառատոնին»:

Հոբելյանական միջոցառման շրջանակներում գիտության զարգացման գործում ներդրած ավանդի համար ՀՀ Նիկոլ Փաշինյանը վարչապետի հուշանոթալով պարգևատ-

րեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ասիստենտի կատալիզի լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների թեկնածու Աննա Մկրտչյանին և ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր Հրաչյա Ասցատրյանին:

Հոբելյանական միջոցառման շրջանակներում տեղի ունեցավ ակադեմիկոս աստղագետ և աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան 2020 թ. միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը: Մրցանակը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանձնեց պրոֆեսոր Ալեքսանդր Սալային (Ջոնս Հոփքինսի համալսարան, Բալթիմոր, ԱՄՆ)՝ «Տիեզերքում մութ նյութի» որպես չեզոք, թույլ փոխադրող մասնիկ լինելը ցուցադրող իր առաջնային աշխատանքի և տվյալների վրա հիմնված վիճակագրական տիեզերաբանության մեջ իր ներդրումների համար», պրոֆեսոր Իզաբել Բարաֆին (Էքսետերի համալսարան, ՄԹ և Լինոն CRAL/ENS, CNRS, Ֆրանսիա)՝ «Ցածր զանգվածով աստղերի, գորշ թզուկների և արտաբեզակային մոլորակների բնագավառում իր հիմնարար ներդրումների և աստղասեսյանաբանության և կոմպակտ կրկնակիների ոլորտում նորարարական գաղափարների համար», պրոֆեսոր Ադամ Բարրոուզին (Աստղաֆիզիկական գիտությունների բաժին, Փրինսթոնի համալսարան, ԱՄՆ), առաջադրված Փրինսթոնի համալսարանի (ԱՄՆ) կողմից՝ «Գորշ թզուկների և արտաբեզակային մոլորակների տեսություններում իր բեղմնավոր և առաջնային ներդրումների և գորշ թզուկների և արտաբեզակային մոլորակների հետազոտությունների առաջնագծում գիտնականների սերունդ աճեցնելու գործում նրա առաջատար դերի համար»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը նախարարության ոսկե մեդալներով պարգևատրեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ռոման Հովսեփյանին, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի ՄՍՌ մագնիսառեզոնանսային



սպեկտրոսկոպիայի լաբորատորիայի վարիչ Հենրիկ Փանոսյանին, ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Մարինա Աղայանին:

Մոլդովայի գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային գիտության մեջ նշանակալի հաջողությունների և Մոլդովայի գիտությունների ակադեմիայի հետ երկարամյա գիտական համագործակցության համար շնորհվեց Մոլդովայի գիտությունների ակադեմիայի բարձրագույն և ամենախեղիմակավոր պարգևը՝ «Դիմիտրի Կանտեմիր» մեդալը: Այն ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանին հանձնեց Մոլդովայի գիտությունների ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար Փաբրիելա Ռոմանչուկը:

Հանդիսավոր միջոցառումից հետո տեղի ունեցավ հոբելյանական գիտական նստաշրջան: Գիտական զեկուցումներով հանդես եկան Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի մրցանակակիրները՝ պրոֆեսոր Ալեքսանդր Սալայը՝ «Շողիյուններ Տիեզերքում. Տիեզերքի տատանումների սպեկտրի չափումը» թեմայով, պրոֆեսոր Իզաբել Բարաֆը՝ «Աստղերի ներսում. աստղերի ընդերքի հիդրոդինամիկական սինուսցիաներով բացահայտված զաղտնիքները» թեմայով, Ադամ Բարրոուզը՝ «Միջուկային կոլապսով գերմոլորների եռաչափ պայթյունների առաջացման տեսությունը» թեմայով:

Գիտական զեկուցմամբ հանդես եկավ նաև անվանի գիտնական, բյուրեղագետ, քիմիկոս, նյութագետ Արտեմ Օհանովը՝ «Մոլորակներում և նրանց մթնոլորտներում մոլդիացությունների կանխատեսում» թեմայով:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հոբելյանական միջոցառումները շարունակվեցին դեկտեմբերի 20-ին: ՀՀ ԳԱԱ նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված գիտության մայր կաճառի հիմնադրման 80-ամյա հոբելյանին:

Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները, ՀՀ ԳԱԱ ինստի-

Հայաստանի Հանրապետության մեծագույն ինստիտուտ, Հայաստանի Հանրապետության մեծագույն վարչապետ, հարգարժան հյուրեր, դեսպաններ, կառավարության անդամներ, Ազգային ժողովի պատգամավորներ, գործընկերներ, տիկնայք և սպորտայք

Հայաստանի Հանրապետության գիտական հանրությունը տոնում է գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելանսը: Հայոց գիտությունների ակադեմիան 80 տարեկան է: Թույլ տվեք ողջունել հոբելանսին նվիրված հանդիսավոր միասին բոլոր մասնակիցներին:

80 տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին և բովանդակաշատ ուղի է անցել, մեծ գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման: Երկրի գիտական ներուժի պահպանումն ու գիտության զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացի ապահովումն ու նոր կարգերի պատրաստումը եղել են ակադեմիայի գործունեության առաջնահերթ ուղղությունները: Եվ 80-ամյա կենսագրությունը միայն իր ակադեմիայի պատմությունը չէ, իրականում այն նաև մեր երկրի պատմությունն է:

Գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն է, նրա գործունեությունը կանոնակարգվում է առանձին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին օրենքով:

Հայաստանում համակարգված գիտական հետազոտություններ իրականացվել են դեռևս սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին: Մի շարք գիտական կառույցներ գործում էին Երևանի պետական համալսարանի կազմում, իսկ հետազոտությունները զլխավորապես նվիրված էին հայագիտության տարբեր բնագավառներին: 1935 թ. Երևանում բացվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, որը ղեկավարում էր անվանի երկրաբան ակադեմիկոս Ֆրանց Լևինսոն-Լեսսինգը:

1943 թ. նոյեմբերին, Հայրենական մեծ պատերազմի բեկումնային շրջանում, Հայկական ՍՍՌ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի կազմում ընդգրկվում են գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնականներ՝ Զրաբյան Աճառյանը, Ստեփանոս Մախասյանը, Հակոբ Անանյանը, Արտյոմ Աբրահամ Ալիխանյանները, Ավետիք Իսահակյանը, Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Ղափանցյանը, Վիկտոր Համբարձումյանը և ուրիշներ: Նորաստեղծ ակադեմիայի նախագահ է ընտրվում հանրահայտ արևելագետ ակադեմիկոս Զովսեի Օրբելին:

1947 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում տեսական աստղաֆիզիկայի հիմնադիր, երիտասարդ գիտնական, բայց արդեն համաշխարհային ճանաչման արժանացած Վիկտոր Համբարձումյանը, որի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում ակադեմիան կայացել է, ունեցել ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնել խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձել արտասահմանում: Ստեղծվում են մի քանի տասնյակ գիտական ինստիտուտներ, որոնց նշանակալի և ուշագրավ գործունեությամբ Հայաստանը մուտք է գործում միջազգային գիտական ասպարեզ:

Վիկտոր Համբարձումյանը շարունակում է ղեկավարել Հայաստանի գիտությունների ակադեմիան նաև անկախության առաջին տարիներին՝ մինչև 1993 թ., ապա ակադեմիայի նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնում է բարդ՝ Հայաստանի Երրորդ հանրապետության



կազմավորման դժվարին տարիներին, երբ տնտեսական վերափոխումների զուգահեռ անհրաժեշտ էր պահպանել գիտական հիմնական ուղղությունները, կարգային ներուժը, գիտական կապերն ու համագործակցությունը:

2006 թ. ՀՀ ԳԱՄ նախագահ է ընտրվում Երևանի պետական համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ով շարունակում է ակադեմիայի հաջողություններն ամրապնդելու գործընթացը և նախաձեռնում ակադեմիայի կառուցվածքային բարեփոխումներ: Արդյունքում առանձին-առանձին գործող 18 գիտական կազմակերպությունների հեմքի վրա ձևավորվում են ընդլայնված ուղղություններով 3 գիտական կենտրոն և 3 ինստիտուտ: Օպտիմալացման գործընթացն արդիական է նաև այժմ:

Խորհրդային տարիներին Հայաստանի գիտությունների ակադեմիան լուրջ դերակատարություն ուներ ինչպես հանրապետության, այնպես էլ ԽՍՀՄ տնտեսության զարգացման և ռազմաարդյունաբերական համալիրի հզորացման գործընթացներում: Հայաստանը հզոր արդյունաբերական երկիր էր, մեծ թվով գործարաններ էին գործում հանրապետության տարբեր քաղաքներում, և գիտությունների ակադեմիան ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ լուրջ ներդրումներ էր կատարում արտադրությունների գիտական հենքի զարգացման և արդյունաբերական ուղղությամբ, պարբերաբար կատարվում էին արտադրության պահանջարկով պայմանավորված պատվերներ:

Անցած 80 տարիների ընթացքում ակադեմիայում կատարվել են համաշխարհային հնչեղության աշխատանքներ ֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, մեխանիկայի, քիմիայի, կենսաբանության բնագավառներում: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- հայտնագործվել են տիեզերքի վերաբերյալ մեր պատկերացումներում հեղափոխական նշանակություն ունեցած նոր տեսակի աստղային համակարգեր՝ պատմափոխություններ, առաջ է քաշվել գալակտիկաների միջուկների ակտիվության վարկածը, ինչը սկիզբ է դրել այդ բնագավառի զարգացման ամբողջ աշխարհում: 1965 թ. իրականացվել է եզակի աստղագիտական շրջափայլություն, որը համարվում է 20-րդ դարի աստղաֆիզիկայի մեծագույն ձեռքբերումներից մեկը և ճանաչվում է որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» գրանցամատյանի փաստագրական արժեք: Զարգացել է արտամթնոլորտային աստղագիտությունը՝ ստեղծվել են «Օրիոն» ուղեծրային աստղադիտարանները, որոնք տեղադրվել են «Սայուտ-1» և «Սոյուզ-13» տիեզերական կայանների վրա:

- Սկսած 1960-ական թվականներից՝ զարգացել է լազերային ֆիզիկան, մշակվել և արտադրվել են «Արզնի» և «Հրազդան» արդյունաբերական լազերները, պատրաստվել է արբանյակի կազմում աշխատող ռադիոնետրերի համակարգը,

որը համակցվել է «Միր» ուղեծրային կայանին: Կազմակերպվել է մեծ ճշգրտության էլեկտրոնային փոխակերպիչների զանգվածային արտադրությունը Հայաստանում:

- Ձեռք են բերվել հիմնարար արդյունքներ մաթեմատիկայի բնագավառում՝ կոմպլեքս անալիզի ու ֆունկցիաների տեսության մի շարք ուղղություններում, որոնք հետագայում մեծ կիրառություն են ստացել ֆիզիկայի, ճարտարագիտության, համակարգչային գրաֆիկայի, արհեստական բանականության, համակարգչային տոմոգրաֆիայի և այլ բնագավառներում:

- Քիմիայի բնագավառում գրանցվել են կարևորագույն հիմնարար և կիրառական նշանակություն ունեցող արդյունքներ դեղագործության, ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների սինթեզի, նոր հետերոցիկլիկ համակարգերի մշակման, ճյուղավորված շղթայական ռեակցիաների հետազոտման բնագավառներում: Մշակումները հաջողությամբ են դրվել ինչպես Հայաստանում, այնպես էլ ԽՍՀՄ այլ հանրապետություններում գործող արտադրական գործարաններում:

- Կենսաբանության բնագավառում, դեռևս 1960-ական թվականներին մշակվել է մայրական կաթին փոխարինող «Նարինե» պրոբիոտիկը, որը իր հետագա կիրառությունն է ստացել աշխարհի ավելի քան 50 երկրներում: Ստեղծվել է կենսաքիմիայի և նյարդաքիմիայի հայկական դպրոցը, բացվել է էկոլոգամոսֆերային հետազոտությունների կենտրոնը:

- Երկրաբանության բնագավառում կարևոր ներդրում էին հանքային ֆորմացիաների ու մետաղագոյացման պրովինցիաների տեսության վերաբերյալ հետազոտությունները, որոնք բարձր զենահատակամի են արժանացել ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հետագայում Գյումրիում ստեղծվում է Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցող սեյսմաբանության և երկրաշարժագիտության գիտահետազոտական ինստիտուտ:

- Ներկայի ու պատմական Հայաստանի ժառանգության ուսումնասիրողն ու վերծանողն ակադեմիայի հայագիտության ու հասարակական գիտությունների բնագավառն է, որի մշակներին ենք պարտական համաշխարհային քաղաքակրթության բացառիկ ու շատ հաճախ եզակի նմուշների, Ուրարտական շրջանի ավելի քան 28 դար առաջվա զարմանահրաշ աշխարհի, մագաղաթյա բազմալեզու ձեռագրերի ու մատենագրության, բանահյուսության, մանրանկարչության, տաճարների ու ամրոցների, բազմաշերտ հողով ծածկված առեղծվածների բացահայտման և ուսումնասիրության համար:

- Հայ պատմաբանների ընդհանրացված ձեռքբերումներն են «Հայ ժողովրդի պատմություն» ութատրյակը, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները:
- Անշուշտ, հայ ժողովրդի կարևորագույն նվաճումներից է Հայկական Հանրապետության, որի բոլոր 13 հատորներում զետեղված նյութերը, հողվածները հիմնականում պատրաստվել են ակադեմիայում, իսկ նրա նախագահը՝ Վիկտոր Համբարձումյանը, եղել է Հանրապետության առաջին զլխավոր խմբագիրը:

Հիշատակվածները մեր ակադեմիայի ձեռքբերումների մի մասն են միայն, ձեռքբերումներ, որոնք ընդունվել են միջազգային գիտական հանրության կողմից և համաշխարհային գիտությունը հարստացրել նորանոր նվաճումներով, ձեռքբերումներ, որոնք հնարավորություն են տվել Հայաստանի Հանրապետությունում ստեղծելու միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական

դպրոցներ ֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, քիմիայի, կենսաբանության, հնագիտության և այլ բնագավառներում:

Կարևորագույն նախաձեռնություն էր մայր հայրենիքի և սփյուռքահայ գիտնականների հզոր ներուժի համախմբումը ԳԱՄ շրջանակներում, հայ գիտական միտքը Հայաստանի Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման ուղղությամբ, դրանով իսկ խթանելով հայ գիտնականների միջազգային համագործակցությունն ու մասնակցությունը միջազգային գիտական, գիտակրթական ծրագրերին: ՀՀ ԳԱՄ արտասահմանյան անդամները ներկայացնում են 17 երկիր, դրանց շարքում են ականավոր ֆիզիկոս Յուրի Զովիանինսկյանը, որի անունով է կոչվում Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ քիմիական տարրը՝ «Օգանեսոնը», ֆիզիոլոգիայի և բժշկության ոլորտում 2021 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր Արտեմ Փաթափությանը, Միացյալ Թագավորության առողջապահության նախկին նախարար, «Ավորա» մարդասիրական մրցանակի հանձնաժողովի նախագահ Լորդ Արա Դարգին և նշանավոր այլ գիտնականներ:

Հաջորդ կարևոր նախաձեռնությունը Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հիմնումն էր 2009 թ., որը շնորհվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ աստղաֆիզիկայի և հարակից բնագավառներում գիտական խոշոր ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին: 2010-2020 թթ. մրցանակակիրներ են դարձել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների, Իսպանիայի, Պորտուգալիայի, Իռլանդիայի և Էստոնիայի գիտնականները: Դրանցից Միշել Մայորը հետագայում արժանացել է ֆիզիկայի բնագավառի 2017 թ. Նոբելյան մրցանակի, ընդ որում՝ նույն ձևակերպմամբ, ինչպիսին Վ. Համբարձումյանի անվան մրցանակին արժանանալու ժամանակ: Հարգելի գործընկերներ, սույն հոբելանական միասին շրջանակներում կիրականացվի Վ. Համբարձումյանի անվան մրցանակի հանձնումը 2020 թ. մրցանակակիրներին պրոֆեսորներ Ալեքսանդր Սալային (ԱՄՆ), Իզաբել Բարաֆին (Միացյալ Թագավորություն) և Ադամ Բարոուզին (ԱՄՆ):

Այսօր ժամանակի հրամայականն էր մշակել և ներդնել Գիտությունների ազգային ակադեմիայի բարեփոխումների ծրագիրը, արդիականացնել համակարգի գործառնությունները՝ դրանք համապատասխանեցնելով գիտության զարգացման ժամանակակից պահանջներին, վերափոխել համակարգում իրականացվող հետազոտությունների ուղղվածությունը՝ հիմնական ուշադրությունը բեռնելով հանրապետության տնտեսության կարիքներից բխող կիրառական աշխատանքներին, ակտիվացնել պետական կառավարման մարմիններին գիտամեթոդական և փորձագիտական խորհրդատվություն տրամադրելու գործընթացը, ներդնել գիտական կարգերի վերարտադրության արդյունավետ համակարգ, գիտական կազմակերպությունների ղեկավար մարմիններում ներգրավել երիտասարդ գիտնականներին, զարգացնել միջազգային գիտական համագործակցությունը և այլն:

Այս բոլորին գումարվել է նաև վերջին աշխարհաբաղաձաձ փոփոխություններով պայմանավորված, մասնավորապես 2020 թվականի 44-օրյա պատերազմի, 2023 թվականի սեպտեմբերյան դեպքերի և Լեռնային Ղարաբաղի բնակչության բռնի հայրենագրվման արդյունքում առաջացած նոր մարտահրավերներին առաջ ու համարժեք արձագանքելու անհրաժեշտությունը, ինչն ինքնին նոր պահանջներ է առաջադրում ՀՀ գիտակրթական ողջ համակարգին ➤ 3

ՀՀ ԳԱՄ ԵԱՄԽԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ՍԱՂՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

➤ Ընդհանրապես և ՀՀ ԳԱՄ-ին՝ մասնավորապես:

Անշուշտ, նշված հիմնահարցերի լուծման բանալին առաջին հերթին պետք է փնտրել ՀՀ ԳԱՄ բարեփոխումների մեջ: ԽՍՀՄ կազմում հայկական գիտությունների ակադեմիան եղել է վիթխարի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր մեծաքանակ գիտական ու գիտատեխնիկական կազմակերպությունների առկայությունը համրապետությունում: Այսօր անհրաժեշտ է օպտիմալացնել համակարգը և դրանց հենքի վրա ստեղծել գիտական, գիտատեխնոլոգիական կամ գիտաարտադրական գերազանցության կենտրոններ՝ նախապատվությունը տալով Հայաստանի տնտեսության կարիքներից բխող կիրառական հետազոտություններին կամ պաշտպանականության ամրապնդմանը միտված աշխատանքներին:

Անկախության տարիներին գիտության անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդել նրա զարգացման ընթացքի վրա: Սակայն երախտագիտությամբ պետք է արձանագրել, որ վերջին տարիներին պետական բյուջեից գիտությանը հատկացումների զգալի ավելացումները հնարավորություն են տվել և՛ բարձրացնելու գիտաշխատողների աշխատավարձերը, և՛ արդիականացնելու ենթակառուցվածքները, և՛ իրականացնելու բազմաբնույթ դրամաշնորհային ծրագրեր: Համրապետության գիտական համրությունը ակնկալում է դրանց շարունակականությունը և հետագա զարգացումը:

Կարևորագույն խնդիր է գիտության ոլորտի կադրային կազմի էական կրճատումը և տարիքային կառուցվածքի փոփոխությունը: Եթե 1990 թ.-ին ԳԱՄ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թիվը նվազել է ավելի քան երկու անգամ՝ հասնելով մոտ 3400-ի: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին՝ երիտասարդ կադրերի համար գիտությունը, այնուամենայնիվ, դեռևս մնում է պակաս գրավիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև՝ արտերկիր: Եվ այս հարցը թերևս մեր առջև ծառացած ամենակարևոր մարտահրավերներից մեկն է:

Համակարգում իրականացվող հետազոտությունների որոշ մասը չի համապատասխանում գիտության զարգացման արդի չափանիշներին: Ընդհանուր հետազոտությունների մեջ փոքր է կիրառական հետազոտությունների մասնաբաժինը, և ընդհանրապես ցածր է գիտական արդ-

յունքների առևտրայնացման մակարդակը, գրեթե բացակայում են տնտեսության կողմից պատվիրված հետազոտությունները:

Այս բոլորով հանդերձ, ԳԱՄ գիտաշխատողները, այնուամենայնիվ, անկախության տարիներին գիտության տարբեր բնագավառներում ունեցել են գիտական լուրջ արդյունքներ, որոնք ճանաչվել են համաշխարհային գիտական համրության կողմից:

Անշուշտ, արժանավայել նախաձեռնություն է Բուսաբանական այգում «Կյանքի պուրակ» հիմնելու ՀՀ կառավարության որոշումը, նվիրված Արցախյան պատերազմի նահատակների հիշատակին:



Չնայած առկա խնդիրներին՝ Գիտությունների ազգային ակադեմիայում վերջին տարիներին մշակվել ու իրականացվում են մի շարք մոր նախաձեռնություններ:

- 2022 թ. ՀՀ ԳԱՄ նախագահությունը հաստատել է ակադեմիայի 2022-26 թթ. ռազմավարությունը, որով սահմանվել են համակարգի զարգացման նպատակները, դրանց հասնելու միջոցառումներն ու միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման առաջնությունները, մշակվել է ակադեմիայի բարեփոխումների ծրագիրը, այն կյանքի կոչվի Կրթության և գիտության մոր օրենքի ընդունումից հետո:

- Երիտասարդացվել է գիտական կազմակերպությունների ղեկավար կազմը. ընտրված տնօրենների կեսից ավելին տարիքը չի գերազանցել 50-ը:

- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համար անչափ կարևոր է միջազգային համագործակցությունը: ՀՀ ԳԱՄ-ն գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի, ISC (International Science council), ALEA, ANSO և այլ միջազգային ընկերությունների անդամ է: Կնքված են համագործակցության պայ-

մանագրեր և ճանապարհային քարտեզներ ավելի քան 40 երկրների գիտությունների ակադեմիաների հետ, ընդ որում, դրանցից որոշները կնքվել են երեկ սույն հոբելյանական միջոցառումների շրջանակներում:

- Ստեղծվել է մշտական հիմունքներով գործող յոթ մասնագիտական պրոբլեմային խորհուրդ՝ գիտության և տեխնոլոգիաների տարբեր բնագավառներում առկա հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու, գիտական, գիտամեթոդական և փորձագիտական վերլուծություններ կատարելու և պետական կառավարման մարմիններին ու գերատեսչություններին, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածին

խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Խորհուրդների գործունեության ոլորտը բավականին ընդգրկում է՝ սկսած ներդրումային և հատուկ նշանակության հարցերից, մինչև պատմամշակութային ժառանգության պահպանության և հայոց լեզվի տերմինաբանության հարցերը: Խորհուրդների կազմում ներառված են ՀՀ ԳԱՄ արտասահմանյան անդամներ և արտերկրյա առաջատար գիտնականներ:

- Ներդրվել են երիտասարդ գիտնականների անհատական խրախուսման մեխանիզմներ. իրականացվում է երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը, անցկացվում է «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթը:
- Սահմանվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակ, որը շնորհվելու է որպես առանձին մրցանակ հիմնարար հետազոտությունների բնագավառում ունեցած ձեռքբերումների և կիրառական կամ առևտրայնացման ենթակա մշակումների համար:

Վերջում ուզում են անդրադառնալ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության բնագավառների համար մեծ նշանակություն ունեցող «Ակադեմիական քաղաք» մեզանախագծին և դրանում Գիտությունների

ազգային ակադեմիայի դերին:

Անշուշտ կարևոր է ՀՀ կառավարության նախաձեռնությունը՝ մշակելու և ներդրելու այդպիսի խոշորամասշտաբ ծրագիր, որի իրականացման արդյունքում հնարավոր կլինի Հայաստանի գիտատեխնոլոգիական և ինովացիոն զարգացման համար ապահովել անհրաժեշտ պայմաններ, ենթակառուցվածքներ և միջավայր: Ակադեմիական քաղաքը բաղկացած է լինելու կլաստերներից, որոնք կազմավորվելու են խոշորացված բուհերի և դրանց հետ միավորված գիտահետազոտական մի շարք կազմակերպությունների հենքի վրա:

Մեր կարծիքով, կլաստերներում կարելի է ներգրավել այն գիտահետազոտական կազմակերպությունները կամ դրանց միավորները, որոնք գործունեությունն ամբողջովին կամ գերազանցապես համընկնում է տվյալ կլաստերի գործառնություններին: Դա հնարավորություն կտա տարանջատելու հիմնարար և կիրառական ուղղվածության գիտական հետազոտությունները և Գիտությունների ազգային ակադեմիային վերապահելու իրեն հոգեհարազատ հիմնարար հետազոտությունների ոլորտը, ինչով նա զբաղվել է անցած 80 տարիների ընթացքում: Նման մոտեցումը մի կողմից հնարավորություն կտա լուծելու կիրառական կամ ավելի շուտ տեխնոլոգիական բեկումնային զարգացման խնդիրները, իսկ մյուս կողմից կպահպանի արդեն կայացած գիտական ավանդույթներ ունեցող, միջազգային գիտական տարածքում ուրույն տեղը ձեռք բերած, ժամանակի 80-ամյա քննությանը դիմացած և գիտության մի շարք բնագավառներում համաշխարհային ճանաչում ստացած գիտական դպրոցներով հայտնի համակարգը:

Համոզված են, որ նշված միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի պահպանել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի լավագույն ավանդույթները և զարգացնել նորերը՝ ի նպաստ հանրապետությունում գիտակրթական և գիտատեխնոլոգիական առաջընթացի, տնտեսության զարգացման և պետության պաշտպանողականության հզորացման:

Ավարտելով խոսքս՝ մեկ անգամ ևս շնորհավորում են մեր հանրությանը Գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելյանի կապակցությամբ և հուսով են, որ ՀՀ ԳԱՄ-ն իր արժանավայել տեղը կպահպանի մեր հասարակության մեջ և պետության ապագա ռազմավարական ծրագրերում:

Աշոտ Սաղյանի նախագահությամբ անցկացվեց ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI նիստը



Սույն թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI նիստը, որն անցկացվեց հեռավար ձևաչափով:

Նիստին մասնակցեցին ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի անդամներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից, ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչներ:

Նիստը նախագահեց ՀՀ ԳԱՄ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ով 2023 թ. ընտրվել է ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահ: ՀՀ ԳԱՄ-ից նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱՄ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը, ԱՊՀ երկրների հետ համագործակցության հարցերով ՀՀ ԳԱՄ փորձագետ Վերոնիկա Վարդանյանը:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱՄ նախագահը նշեց. «Վստահ եմ, որ այս քննարկումը կնպաստի մեր գիտնականների միջև մեր համագործակցության ձևավորմանը»:

Նիստի ընթացքում հանդիպման մասնակիցները ծանոթացան հեռանկարային գիտական նախագծերի ցանկի իրականացման ընթացքին, որը հաստատվել էր ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի՝ 2022 թ. մայիսի 20-ի որոշմամբ:

Խորհուրդը քննարկեց ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության զարգացման՝ 2023-2024 թթ. հիմնական միջոցառումների ծրագիրը, համագործակցության հետագա զարգացման հայեցակարգը, առաջնահերթ գործողությունների պլանը:

ՀՀ ԳԱՄ բնական գիտությունների բաժանմունքի ա-

կադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը, ով պատասխանատու է ԱՊՀ անդամ երկրների վիրուսաբանության և COVID-19 համավարակի համատեղ ծրագրի մշակման համար, ներկայացրեց ծրագրի նախագծի իրականացման ընթացքը: Խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱՄ-ն կշարունակի մշակել համատեղ ծրագիրը՝ հաշվի առնելով մեր առաջարկները: Խորհուրդը հաստատեց ԱՊՀ անդամ երկրների գիտական հաստատություններում ասպիրանտների և երիտասարդ գիտնականների փորձի փոխանակման ուսումնական կենտրոնների ցանցի կամուրջակարգը: Հաստատվեցին ԱՊՀ-ում միասնական գիտական տարածքի ձևավորման համար թվային ենթակառուցվածքի զարգացման խորհրդատվական և համակարգող խմբի կազմը և կանոնակարգը, խորհրդին կից Երիտասարդ գիտնականների խորհրդի կազմը:

2024 թ. համար ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահ ընտրվեց Տաջիկստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆարիդ Ռահիմին: Խորհրդի հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում:

ՀՀ ԳԱՄ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանն անցկացրեց «Ակադեմիա-80» հոբելյանական միջոցառումը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Ակադեմիա-80» միջոցառումը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ-ի 80-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը:

Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, Հայաստանի գիտակրթական և մշակութային ինստիտուտների և կենտրոնների ղեկավարներ ու ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը. «Հիմնարար գիտական գրադարանը մեր ակադեմիական համակարգի ամենակարևոր կառույցներից է: Նրա խնդիրներից է մեր գիտական արդյունքների ներկայացումը: Առաջին հերթին խոսքը վերաբերում է մեծ ծավալի՝ մոտ 4 միլիոն նյութերին, որոնք կան գրադարանում: Ես կարևորում եմ այն գործունեությունը, որն իրականացնում է գրադարանն ամեն մի հետազոտողի համար: Առանձնապես կարևոր է վերջին տասնամյակների գործունեությունը, որովհետև նոր տեխնոլոգիաների կիրառությունը գրադարանային ոլորտում ամենադժվար և ամենակարևոր հարցերից է, հատկապես թվայնացումը: Գրադարանը պատվով է կատարել այդ դժվարին գործը»:

«Գրադարանը բոլորիս կյանքում խաղացել է շատ կարևոր դեր: Առանց գրքի, առանց գրադարանում աշխատելու հմարավոր չէ դառնալ լուրջ մասնագետ: Գրա-



դարանը վճռական դեր է խաղում մարդու ինտելեկտուալ զարգացման գործում: Այսօր դուք ունեք մրցակից՝ համացանցը: Բայց եթե խորը վերլուծենք, այն երբեք չի կարողանա փոխարինել գրադարանին: Դուք կարող եք էլեկտրոնային եղանակներով ապահովել ընթերցողների մուտքն աշխարհի գրադարաններ՝ նրանց գրքերին հաղորդակցվելու համար: Դուք ձեր մեծ ավանդը եք դնում Հայաստանում գիտության զարգացման և հայ գիտնականների ձևավորման գործում», - ասաց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի իրականացրած գործունեությունն իր ելույթում բարձր գնահա-

տեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեխտա Դուլխանյանը՝ համադրելով այն աշխարհի առաջադեմ գրադարանների աշխատանքի հետ:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը նշեց, որ միջոցառման նպատակն է ներկայացնել «Գիտությունների ազգային ակադեմիա-80» և «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» շտեմարանները:

«Գիտությունների ազգային ակադեմիա-80» հավաքածուի մեջ ներառված են ՀՀ ԳԱԱ գործունեությունը լուսաբանող կամ գիտական այս կառույցին առնչվող նյութեր՝ համապատասխան թվային տարբերակներով:

«Ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» հավաքածուի մեջ ներառված են տվյալներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կյանքի և գործունեության վերաբերյալ: Ներկայացված են յուրաքանչյուր գիտական գործչի կենսագրությունը, կյանքի և գործունեության տարբերությունը, ինչպես նաև մատենագիտությունը՝ բաղկացած երկու մասից՝ տվյալ ակադեմիկոսի գիտական իրապարակումների ցանկը և նրա մասին նյութերը:

Միջոցառման ժամանակ ցուցադրվեց Հիմնարար գիտական գրադարանի պատրաստած՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյակին նվիրված տեսանյութը: Ձուգահեռ կազմակերպվել էր ցուցադրություն գրադարանի ընթերցասրահում:

«Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները» միջազգային գիտաժողովը



Վերջերս ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը կազմակերպել էր «Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը. «Օգտվելով խոշոր տերությունների զբաղվածությունից՝ որոշ երկրներ փորձում են լուծել իրենց խնդիրները: Եվ թերևս դա պատճառներից մեկն է, որ Հարավային Կովկասում իսկապես կա անվտանգության սպառնալիք, և այս գիտաժողովը պետք է անդրադառնա այս հարցերին: Այդ երկրներն ունեն խնդիրներ, որոնք ծրագրել են դեռ հարյուր տարի առաջ թուրքիայի կողմից Ադրբեյջան պետության ստեղծմամբ: Ահա այսօր իրենց ծրագրով նախատեսված խնդիրները փորձում են լուծել: Այս միտքը պետք է մեզ մի ուշագրավ գաղափարի բերի. անկախ պետություն ունենալու համար պետք է ունենալ նաև երկարաժամկետ քաղաքական ծրագիր կամ ռազմավարություն: Մեր գիտաժողովն ունի լուրջ խնդիրներ քննարկելու, դրանք գիտական առումով կարևորելու և մշակելու հանձնարարականներ»:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական Մոհամադ Ա-սադի Մոհամեդը, ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, մասնավորապես նշեց. «Հույս ունեմ, որ այս գիտաժողովի արդյունքը կաջակցի տարածաշրջանի կայունությանը և անվտանգությանը, քանի որ մենք հավատում ենք, որ էլիտաների միջև նման քննարկումները կարող են լինել շատ արդյունավետ: Մենք այսօր այստեղ ենք հավաքվել՝ քննարկելու անվտանգության և քաղաքական կայունության կարևոր հարցը, ինչպես նաև տնտեսության, մշակույթի զարգացման և խաղաղության հարցերը: Հայտնի է, որ անվտանգության և կայունության պակասը բազմաթիվ մարտահրավերներ է բերում հասարակության համար»:

Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը նշեց. «Խորհրդային Միության փլուզումից հետո Իրան և Հայաստան հարաբերությունները եղել են բարդացողական և փոխադարձորեն վստահված, ուստիև կայուն և զարգացման միտում ունեցող: Սակայն այդ զարգացման գործընթացում միշտ էլ տնտեսականը զիջել է քաղաքականին, ինչի լուրջ բացը նկատվեց հատկապես դարաբաշխման 2-րդ պատերազմից հետո: Նման միջոցառումները չափազանց կարևոր են, որպեսզի երկու երկրների որոշում կայացնող կենտրոնները տեղյակ լինեն միմյանց հայացքներից և մտահոգություններից, ծանոթանան աշխարհընկալումներին և քաղաքականությունների մշակման ոճին ու ձևավորմանը»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը հանդես եկավ «Հարավային Կովկասում տեղի ունեցող նոր զարգա-


ցումները. հայացք Հայաստանից» թեմայի վերաբերյալ զեկուցմամբ: Նա նշեց, որ գիտաժողովն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ, և երեք տարի շարունակ խմբով ուսումնասիրություն են իրականացնում «Հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպումը և արցախյան 2020 թ. պատերազմը. տարածաշրջանային զարգացումների միտումները աշխարհաքաղաքական նոր իրողությունների ներքո» թեմայի շրջանակում: Հաջորդ տարի գիտական խումբը լույս կընծայի կոլեկտիվ մենագրություն, որում ամփոփված կլինեն ուսումնասիրության արդյունքները:

Այդ թեմատիկ ծրագրի ղեկավարն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարյանը, խմբի կազմում են ԵՊՀ դոցենտներ Ալեն Ղևոնդյանը, Մեմուա Սողոմոնյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի՝ Թուրքիայի բաժնի գիտաշխատող Քրիստինե Մելքոնյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս Լիանա Պետրոսյանը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, ԱՄՆ Մասաչուսեթսի Սթոնհիլլ քոլեջի, Իրանի Իսլամական Ազատ համալսարանի, Իրանի Փայամ Նոր համալսարանի, Բեյրութի Ամերիկյան համալսարանի, Հայաստան-Իրան համագործակցության զարգացման հիմնադրամի, Օրբելի կենտրոնի գիտաշխատողներ, հետազոտողներ:

Կլոր սեղան քննարկման ժամանակ մասնակիցներն ամփոփեցին իրենց աշխատանքները և կազմեցին աշխատանքային նոր ծրագիր, ըստ որի՝ պետք է հետազոտող խումբը մշակի քաղաքական զարգացումների սցենարներ և դրանք ներկայացնի պատկան մարմիններին:

«Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտաժողովը



Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Վիլյամ Սարոյան հիմնադրամը (Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ):

Գիտաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը. «Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունները խթանել են հայ և ոչ միայն հայ արվեստի զարգացումը: Սարոյանի պիեսները բեմադրվել են Հայաստանի և Սփյուռքի թատրոններում և մեծ դեր կատարել հայ ռեժիսորների և դերասանների

րի ստեղծագործական ճակատագրում: Սարոյանի ստեղծագործությունների հիման վրա գրվել են երաժշտական ստեղծագործություններ՝ երգերից մինչև օպերաներ: Սարոյանի կերպարը մարմնավորվել է հայ կերպարվեստում: Վիլյամ Սարոյանը տաղանդավոր է իր բոլոր դրսևորումներում»:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը. «Այս գիտաժողովը նվիրված է միջգիտակարգային հիմնախնդրի՝ գրականության և արվեստի առնչություններին: Սա չափազանց շահեկան նախաձեռնություն է, որովհետև գիտություններն այսօր զարգանում են տարբեր գիտաճյուղերի հատույթներում, որտեղ մենք այսօր կարող ենք նոր խոսք ասել: Գիտաժողովը հնարավորություն է մեկ անգամ ևս արժևորելու Սարոյանի գրական ժառանգությունը և այն դիտարկելու արվեստի տեսանկյունից»:

Նա վերհիշեց, թե ինչպես է առաջին անգամ դի-

տել «Իմ սիրտը լեռներում է» բեմադրությունը՝ նվիրված կինոյի և թատրոնի հայ անվանի դերասան Հրաչյա Ներսիսյանի հիշատակին, Վահրամ Փափազյանի և Վարդուհի Վարդերեսյանի մասնակցությամբ:

«Վիլյամ Սարոյանին առնչվող արվեստի, թատրոնի, նկարչության, երաժշտության գործերում կա ներշնչանք: Պետք է իմանանք՝ ինչ խորություն ունի սարոյանական ստեղծագործությունը, և այնպես հանրահռչակենք այն, որ հատկապես երիտասարդությունն իրազեկված լինի և հպարտ, որ նման նշանավոր հայրենակից ունի», - ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը:

«Ուրախ եմ միանալու այս գիտաժողովին, որի օրակարգում Սարոյանի կյանքի և ստեղծագործության դրվագներն են: Մտածում էի, թե ինչպես կարձագանքեր Սարոյանն այս հանդիպմանը, որն անցկացվում է իր ծննդից 115 տարի անց Հայաստանում, և որտեղ ելույթ են ունենում

առաջատար գիտնականներ: Կարծում եմ, որ նա կասեր. «Սա ամենազվարճալի բանն է, որ երբեք տեսել եմ»: Բայց ես գիտեմ, որ նա շատ գոհ կլիներ: Սարոյանը շատ ուշադիր էր իր ժառանգության նկատմամբ: Մենք բոլորս պետք է հպարտ լինենք, որ այս գիտաժողովի մի մասն ենք», - ասաց Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ Սթեֆ Սեդրակյանը:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Իսլանդիայի, Սերբիայի միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ, արվեստի, մշակույթի, գրականության վաստակավոր գործիչներ և երիտասարդ հետազոտողներ: Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին 35 գիտական զեկուցումներ, որոնք բացահայտեցին Վիլյամ Սարոյան և արվեստ առնչությունները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՆՈՒՅՆԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ 2023 Թ. ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ



Ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառում 2023 թվականի Նոբելյան մրցանակակիրներ են դարձել հունգարացի Կատալին Կարիկոն և ամերիկացի Դրյու Վայսմանը՝ COVID-19-ի դեմ մՌՆԹ (mRNA) պատվաստանյութի մշակման ոլորտում հետազոտությունների համար:


Քիմիայի բնագավառում 2023 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիրներն են՝ ամերիկացիներ Մունգի Բավենդին և Լուիս Բրյուսը, ինչպես նաև ռուսաստանցի Ալեքսեյ Եկիմովը: Մրցանակը շնորհվել է «Քվանտային կետերի հայտնաբերման և սինթեզի համար»: Միմյանցից անկախ Եկիմովին և Բրյուսին հաջողվել է ստեղծել քվանտային կետեր, իսկ Բավենդին հեղափոխություն է կատարել քիմիական արտադրության բնագավառում:



Ֆիզիկայի բնագավառում 2023 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվել է ֆրանսիական ծագմամբ ամերիկացի Պիեռ Ագոստինին, հունգարա-ավստրիացի գիտնական Ֆերենց Կրաուսին և ֆրանսիացի հետազոտող Անն Լ'Յուիլիեին: Մրցանակը շնորհվել է փորձարարական մեթոդների համար, որոնք առաջացնում են ատոմային լուսային իմպուլսներ՝ նյութի մեջ էլեկտրոնների շարժումն ուսումնասիրելու համար:



2023 թվականի Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է իրանցի իրավապաշտպան Նարգես Մոհամմադին: Մրցանակը շնորհվել է «Իրանում կանանց ճնշումների դեմ նրա պայքարի և բոլորի համար մարդու իրավունքներն ու ազատություններն առաջ մղելու համար»: Նարգես Մոհամմադին հայտնի է մարդու իրավունքների, խոսքի ազատության համար իր պայքարով: Նա այժմ գտնվում է բանտում:



Գրականության ասպարեզում 2023 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվել է նորվեգացի բանաստեղծ և դրամատուրգ Յուն Ֆոսեին: Մրցանակը նրան շնորհվել է նորարարական պիեսների և արձակի համար:



Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է աշխատանքի շուկայում կանանց դերի հետազոտության համար: Այս տարի շվեդական պետական բանկի՝ Ալֆրեդ Նոբելի հիշատակին նվիրված տնտեսագիտության մրցանակի դափնեկիր է դարձել Կլաուդիա Գոլդինը՝ տնտեսագետ, պատմաբան և գենդերային հարցերի մասնագետ (ԱՄՆ, Զարվարդի համալսարան):



«Յորիզոն Եվրոպա» ծրագրում Հայաստանն առաջնորդաց է գրանցում

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Եվրոպական միության «Յորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառումը, որը կազմակերպել էր Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնը՝ Եվրոպական համաձայնագրի և ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ:

«Միջոցառման նպատակն է խթանել Հայաստանի կազմակերպությունների մասնակցությունը գիտահորարարական նախագծերում», - իր ողջույնի խոսքում նշեց Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնի տնօրեն Տիգրան Արզումանյանը:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոյանը՝ նշելով, որ «Յորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում պետք է լինել ակտիվ և օգտագործել ընձեռնված հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը շեշտեց «Յորիզոն Եվրոպա» ծրագրի կարևորությունը Հայաստանի գիտահետազոտական համայնքի համար: «Յորիզոն Եվրոպա»-ն մրցունակ ծրագիր է, և համարժեք մասնակցություն ունենալու համար հայկական գիտահետազոտական ինստիտուտներն ու համալսարանները պետք է իրականացնեն համաշխարհային մակարդակի հետազոտություններ, ակտիվ ներգրավված լինեն միջազգային համագործակցության մեջ: Մենք առաջնահերթություն ենք տալիս մեր գիտահետազոտական ինստիտուտների՝ որպես եվրոպական ծրագրերի հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունների ուժեղացմանը: Այս առումով դեռ շատ խնդիրներ ունենք լուծելու: Վստահ եմ, որ գիտության և նորարարության ոլորտում իրականացվող ծրագրերը, ֆինանսավորման զգալի ավելացումը, գիտության միջազգայնացմանն ուղղված քայլերը կհանգեցնեն դրական արդյունքների և ավելի ակտիվ մասնակցության եվրոպական ծրագրերում», - ասաց Արթուր Իշխանյանը:

«Յորիզոն Եվրոպա» ծրագրի ասոցացման հարցերով ստորաբաժանման ղեկավարի տեղակալ Անն Հագլունդ-Մորիսին նշեց, որ Եվրոպական միությունը կարևորում է համագործակցությունը նորարարությունների ոլորտում՝ հաղթահարելու գլոբալ մարտահրավերները՝ կլիմայի փոփոխությունը, «Բովիդ-19» համավարակը, խաղաղության, ժողովրդավարության նկատմամբ սպառնալիքները:

«Հայաստանը մեկն է այն երկրներից, որն ունի հետազոտությունների և նորարարությունների համար համագործակցության հնարավորություններ: Ուրախությամբ նշեմ, որ «Յորիզոն 2020»-ին Հայաստանն ունեցել է ակտիվ մասնակցություն: Շնորհավորում եմ «Յորիզոն Եվրոպա» ծրագրին ասոցացման համար: Ուրախ եմ նշել, որ Հայաստանն արտոնյալ խմբում ներառված 17 պետություններից մեկն է», - ասաց Անն Հագլունդ-Մորիսին:


Միջոցառման ընթացքում ներկայացվեցին «Յորիզոն Եվրոպա» ծրագիրը և մրցույթները, Հայաստանի գիտահորարարական կազմակերպությունների և անհատ գիտնականների մասնակցության հնարավորությունները «Յորիզոն Եվրոպա» ծրագրում և նրա ենթածրագրերում՝ «Մարի Սկլոդովսկայա-Կյուրիի գործողությունները», «Մասնակցության ընդլայնում և եվրոպական հետազոտական տարածքի հզորացում», «Նորարարությունների եվրոպական խորհուրդ», «COST գործողություններ»:

ԵՄ «Յորիզոն Եվրոպա» ծրագիրը նախատեսված է 2021-2027 թվականների համար: Շուրջ 95 միլիարդ եվրո ընդհանուր բյուջե ունեցող գիտահետազոտական ծրագիրը համաշխարհային մակարդակով ամենածավալունն է, որը համաեվրոպական համագործակցային գիտահետազոտական նախագծերի ֆինանսավորման հիմնական գործիքն է:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Карагёзян-Армения и армяне в записках европейских путешественников (Легенды и придания эпохи раннего христианства).
2. «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութեր», հ.15, N 1, N 2:
3. Авт. кол. «Актуальные проблемы механики сплошной среды (Сборник научных трудов)».
4. T. Harutyunyan, Y. Ashrafyan - Spectral Theory of Dirac operators.
5. «Բանբեր հայագիտության», 2023 թ., N 2:
6. Հ. Մարգարյան-Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից-ԺԴ դարի առաջին կեսին:
7. Լ. Խաչատրյան - Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը:
8. «Արվեստագիտական հանդես», 2023 թ., N 1:
9. Հեղ. խումբ - 1919-1920 թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու:
10. J. Akopian, A. Ghukasyan, A. Elbakyan, L. Martirosyan - Indigenous flora a sa source of arid ornamental horticulture in Armenia.
11. Ա. Բոգոյան, Գ. Դանիելյան, Մ. Շեվալիե - Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների փաստաթղթերում. Վավերագիտական խմբիրներ:
12. «Պատմաբանասիրական հանդես», 2023 թ., N 3:



Լրացավ միջազգային ծանաչում ունեցող հայագիտական հեղինակավոր պարբերականներից մեկի՝ ԳԱՍ «Պատմաբանասիրական հանդես»-ի լույսընծայման 65 - ամյակը:

1958 թ. հիմնադրված հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվեցին հայ պատմագիտության ու բանասիրության ամենահացած անունները: Հանդեսի գլխավոր խմբագիր նշանակվեց նրա հիմնադիր, ակադեմիկոս, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, ով շուրջ 40 տարի անընդմեջ ու անմնացորդ նվիրումով ղեկավարեց հանդեսի աշխատանքները: Հետագայում հանդեսը

խմբագրել են ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս, պատմ.գիտ.դոկտոր Վարդգես Միքայելյանը (1999-2004), պատմ. գիտ. դոկտոր Պարույր Մուրադյանը (2005), ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր Սարգիս Հարությունյանը (2006-2017):

2018 թ. առ այսօր «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է բանասիրական գիտ.դոկտոր Անուշավան Զաքարյանը, ով երկար տարիներ նվիրվել է հանդեսին՝ իբրև պատասխանատու քարտուղար, գլխավոր խմբագրի տեղակալ, և որպես գիտական այս ազդարարի բոլոր նրբերանգներին քաջածանոթ անհատ՝ իր հարուստ փորձով ու հմտություններով շարունակում է հանդեսի հրատարակության պատասխանատու և շնորհակալ գործը:

Անցած տարիների ընթացքում հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում եղել են բազմաթիվ անվանի հայագետներ: Պարբերականի խմբագրականգմը ջանադիր աշխատանքի շնորհիվ հանդեսի շուրջն է համախմբել մեր երկրի և արտասահմանի հայ ու օտարազգի հանրահայտ գիտնականներին:

Այսօր հանդեսում հրապարակվում են հայագիտության բոլոր բնագավառներին առնչվող աշխատանքներ, լուսաբանվում են Հայաստանում, Սփյուռքում ու արտերկրում տեղի ունեցած գիտական, մշակութային կարևոր իրադարձությունները, ներկայացվում են ակադեմիկոսի հայագետների կյանքն ու գործունեությունը, գիտության և մշակույթի նշանավոր դեմ-

քերի անտիպ մամակները, արխիվային տարաբնույթ վավերագրեր: Հանդեսը լուրջ ներդրում ունի կովկասագիտական, արևելագիտական, բյուզանդագիտական ուսումնասիրությունների հրապարակման ասպարեզում:

Ներկայումս խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են առաջատար գիտնականներ Հայաստանից ու Սփյուռքից: Խնդրո առարկա պարբերականում նյութերը հիմնադրման օրվանից հրատարակվել են հայերեն և ռուսերեն, ներկայումս տպագրվում են նաև անգլերեն հոդվածներ:

Վերջին երեք տասնամյակում ՊԲՀ-ն ճաշակեց բոլոր այն դժվարություններն ու դառնությունները, ինչ հայրենի մամուլի մյուս բոլոր մշակարանները: 1997-2009 թթ. «Պատմաբանասիրական հանդես»-ի հրատարակմանը մեծապես նպաստեց «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ»-ը (հայկական բաժանմունքի ղեկավար՝ ՀՀ ԳԱՍ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյան): 2000 թ. «Պատմաբանասիրական»-ը եռամսյակից վերածվեց քառամսյա հանդեսի և մինչ օրս հրատարակվում է տարեկան 3 համար: Պարբերականի կայքէջում տեղադրված են հիմնադրման օրվանից լույս տեսած բոլոր համարների էլեկտրոնային տարբերակները:

Ահա վեց ու կես տասնամյակ հայ և ալյազգի հայագետներն իրենց մտքի ջանադրման արդյունքները նաև այս պարբերականով են մատուցում զբաղմունքա-

կից մշակներին ու գիտության նորություններին սպասողներին: «Պատմաբանասիրական»-ը մասնագիտական հանրության համար դարձել է սիրված ու սպասված գիտելիք աղբյուր, խորհրդատու, ընկեր: Տարվա մեջ երեք անգամ այն մուտք է գործում բազում հայագետների մտավոր որոնումների աշխարհ, նրանց հրամցնում բնագավառի նորություններն ու նվաճումները, գրուցում, բանավիճում նրանց հետ՝ անշուշտ, հարստացնելով վերջիններիս մտավոր պաշարը: «Պատմաբանասիրական»-ը իր էջերը պատրաստականորեն տրամադրում է բոլոր արժանավոր հետազոտողներին. այստեղ կողք կողքի հանդես են գալիս գիտության փորձառու, վաստակաշատ մշակն ու առաջին քայլերն անող, գիտության աշխարհի նոր մուտք գործած երիտասարդ հետազոտողը՝ ասպիրանտն ու հայցորդը: Մինչ օրս լույս է տեսել հանդեսի 224 համար՝ ավելի քան 4600 տպագրական մամուլ ծավալով:

«Պատմաբանասիրական հանդես»-ի յուրաքանչյուր համարի լույսընծայումը նման է երեխայի ծննդին, որ անհուն բերկրանք է պատճառում ծնողներին. հանդեսի այս ծնունդներին մաղթենք մշտադաշտ շարունակականություն, թող հարատևի «Պատմաբանասիրական հանդես»-ն այնքան, քանի կան հայագիտությունն ու հայ ժողովուրդը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄՏԻՔԵՐԻ ՀԱՐԹԱՎ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԸԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՈՐ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԸԱՐՁԻ ՇՈՒՐՋ



«Գիտություն» թերթի տարեկազմի համարի «Մտքերի հարթակ» բաժնում գետեղվել էր ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանի «Որտեղի՞ց է ղեկավարվում հայագիտությունը» հրապարակումը: Լիովին կիսում ենք հայագիտությանն առնչվող հարցերի վերաբերյալ վաստակաշատ արվեստագետի արտա-

հայտած մտահոգությունները: Միևնույն ժամանակ մեզ համար անհասկանալի են նույն կերպ մտածող մեր հայագետներից շատերի լռությունն ու անտարբերությունը գիտությանը ներկայացվող «նոր չափորոշիչներին» նրանց կամա թե ակամա հարմարվելը: Եթե գիտության մյուս բնագավառների համար, այն է՝ ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա և այլն, միջազգային չափորոշիչների կիրառումը լիովին հասկանալի է, ապա հայագիտության բնագավառում դրանց պատճենումն ու մեխանիկական կիրառումն անհասկանալի են ու անտրամաբանական:

Չկա հստակ պատասխան այն հարցերին, թե ինչու և որ ամենակարևորն է, ինչպես կարող է զուտ կոմերցիոն շահեր հետապնդող օտարերկրյա կազմակերպությունը գնահատել հայագիտական աշխատությունների գիտական արժեքը: Եվ վերջապես, միջազգային հեղինակավոր ո՞ր կազմակերպությունների կողմից են նրանց պատվիրակվել այդ լիազորությունները:

Անշուշտ, խիստ ցանկալի է, որ մեր հայագետները գիտական հրապարակումներով հանդես գան արտասահմանյան պարբերականներում: Դա նրանց իրավունքն է, բայց և չպետք է դառնա պարտադրանք նրանց գիտական գործունեության գնահատման ժամանակ: Իսկ թե օտարերկրյա շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ինչպիսի մակարդակով են տպագրվում հայագիտական հոդվածները, հայտնի է շատերին:

Այժմ արտերկրում տպագրված մեկ հոդվածը հավասարեցվում է հայրենիքում տպագրված երեք հոդվածների: Նման տարբերակված մոտեցումը ոչ մի աղերս չունի հայագիտության զարգացման հետ, որի կենտրոնը առավել վերջին հարյուրամյակում եղել և մնում է Հայաստանը: Եվ այս ժամանակահատվածում հայագիտությունը մեծագույն վերելք է ապրել: Նման նորամուծությունների ջատագովներին արժե հիշեցնել հայագիտության բնագավառում թեկուզ միայն 80-ամյա մեր Գիտությունների ակադեմիայի ձեռք բերած հսկայածավալ հաջողությունները, ար-

դեն դասական դարձած մեր ակադեմիկոս հայագետների բազմահարուստ ժառանգությունը: Հայագիտական ուսումնասիրությունների գիտականության աստիճանը միշտ էլ և հետայսու ևս կարող է որոշվել միայն հայագիտության կենտրոնում՝ Մայր հայրենիքում: Հայագիտության բնագավառում նոր խոսք ասելու համար պարտադիր չէ գնալ օտարի դուռը:

Խորհրդային ժամանակներում հայագիտությունը բավական բարձր դիրք, հարգ ու հեղինակություն ուներ: Գիտնականներն ապրում էին միջին կամ միջինից բարձր կենսամակարդակով, պետության կողմից բավարար սոցիալական արտոնություններ ունեին, զոհվում էին այնպիսի միջավայրում, որը նրանց գիտական ու ստեղծագործական աշխատանքին միայն ու միայն նպաստում էր, ոչ թե խոչընդոտում:

Հիմա եկել են բոլորովին այլ ժամանակներ:


Այլևս ոչ միայն ֆինանսական-մյուսական, այլև հոգևոր ու բարոյական պաշտպանվածության մասին ավելորդ է խոսել: Այժմ գիտնականի արժանապատվությունը, նրա սոցիալական պաշտպանվածությունը ավելի կասկածելի ու խախտու կարգավիճակում են: Հայաստանում ապրող և աշխատող հայագետի մասնագիտական արդյունավետության չափանիշը որոշվում է արտասահմանյան գիտական հանդեսներում տպագրված հոդվածների առկայությամբ, ինչը եթե ընդունելի է տեխնիկական և բնական գիտությունների բնագավառում, ապա հայագիտության ոլորտում անհրաժեշտ է դրսևորել տարբերակված մոտեցում և գերծ մնալ նման չափորոշիչի կիրառումից:

Հայագիտության զարգացումն արտերկրում լույ ածանցյալ կամ օժանդակ նշանակություն ու բնույթ ունի: Ուրեմն, բարոյական և իրավական ի՞նչ հիմունքներով է հայագիտությունն ածանցյալ դառնում արտերկրի կենտրոններից ու կասկածելի մակարդակի հաստատություններից:

Բազմաթիվ հարցականներ են ծագում, թե ինչու պետք է այդպես լինի: Հայագիտության մայր լեզուն հայերենն է, ուրեմն ինչո՞ւ է հայագետը պարտավոր իր աշխատությունները թարգմանել անգլերեն և ուղարկել Արևմուտքում միմիայն անգլերենով հրապարակվող հանդեսներին: Եվ դրանով են այժմ որոշվելու հայ գիտաշխատողի դիրքն ու աշխատավարձը: Սա ինչ է, եթե ոչ հայագետ հետազոտողի արժանապատվության նսեմացում...

Հայագիտությունը չպետք է կախված լինի արևմտյան կենտրոններից, այն պետք է ծառայի հայ ժողովրդի ազգային շահերին ու տեսլականին:

Արմեն ԿԱՐԱԴԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ լրագրողների միության անդամ



**ՄԻՋԱՉԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎ**

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԻ
ԱՐԱՐԱՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀԱՅ ՀԱՍՍՅՆԵՐԸ.
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ**

**INTERNATIONAL CONFERENCE
THE ARMENIAN COMMUNITIES
OF THE ARAB COUNTRIES OF THE MIDDLE EAST:**


Ս.թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ԳԱՍ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Մերձավոր Արևելքի արաբական երկրների հայ համայնքները. արդի միտումներ և փոխակերպումներ» թեմայով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն էր ակադեմիական և դիվանագիտական շրջանակների մեկտեղմամբ գիտական դիվանագիտության հարթակում քննարկել հայ համայնքների զարգացման միտումները, առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները, դրանց լուծման հնարավորություններն ու գործիքակազմերը փոխակերպվող տարածաշրջանում:

Գիտաժողովին մասնակցեցին Թուրքիայի Հանրապետությունում և Մարոկկոյի Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանը, ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նորա Արիսյանը, ՀՀ-ում Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպան Սերենադ Գամիլը, ՀՀ-ում Իրաքի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Սուհեյլան Մ. Խալիլ Ալ-Ջուբուրին, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, ՀՀ պետական այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Գիտաժողովի ընթացքում առաջատար հետազոտողները՝ Լիբանանից, Քուվեյթից, ԱՄՆ-ից, ՀՀ ԳԱՍ արևելագիտության ինստիտուտից, Երևանի պետական համալսարանից, Հայ-ռուսական համալսարանից, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանից, ներկայացրին 15 զեկուցում «Արաբական երկրների հայ համայնքների զարգացման առանձնահատկությունները. արդի հիմնախնդիրներ և հեռանկարներ» և «Մերձավոր Արևելքի հայ համայնքները տարածաշրջանային արդի փոխակերպումների առանցքում» խորագրերով նիստերի ընթացքում:

Միջազգային գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱՍ արևելագիտության ինստիտուտը և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

ՀՀ ԳԱՍ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Խմբագրության կողմից - Հուլիսի հեղինակը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Զարյանն է: Անվանի արվեստագետի հուշերը զետեղված են 1975 թ. հրատարակված նրա «Հուշապատում» գրքի առաջին հատորում:

Հնությունների պահպանության կոմիտեի աշխատակիցները, որոնց մեջ էր նաև իմ տիկինը, որոշեցին հավաքվել մեր տանը՝ դիմավորելու 1943-ի Նոր տարին: Տոկարսկու հետ եկավ նաև Օրբելին և հայտարարեց իրեն ինքնակոչ սեղանապետ:

Լավ հիշում եմ, որ Իոսիֆ Աբգարովիչը՝ որպես ավագագույն, բաժակ բարձ-

ԸՈՒՇԵՐ ԸՈՎԱՏԵՓ ՕՐԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

րացրեց և առաջարկեց խմել Նոր տարվա կենացը: Ամեն Նոր տարվա հետ մարդը հույս է կապում. անցյալ տարի չեղավ, կլինի այս տարի: Եվ այդ հույսն էլ պահում է մարդուն: Ուրեմն՝ կենացի համար բարձրագույն բաժակը պետք է պարպել համոզված և հավատալով, որ այս Նոր տարին անպայման կլինի հույսերի իրականացման տարի: Հուսանք, ասաց նա, որ կկատարվի ամբողջ մարդկության հույսը, 1943 թվականը թող հաղթանակի տարի լինի...

Ծիշտ է, հաղթանակը մի քիչ ուշացավ, բայց 1943 թվականը պատմական դարձավ հայ գիտության համար. իմ մադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Գեղեցիկ մարդ էր Օրբելին: Տոհմական ազնվականության դրոշմը դեմքին էր:

Ներկայանալի անձնավորություն էր: Մի մշակակալի բան կար արտաքին պատկերի մեջ, և հնարավոր չէր կողքից անտարբեր անցնել: Երբ հայտնվում էր մի տեղ, սենյակը լցվում էր անմիջապես: Բավական է՝ հեռանար, որ դատարկություն զգացվեր:

Ես տաղանդավոր մարդկանց հանդիպել եմ բավական: Եվ միշտ ուրախ մի զարմանքի մեջ եմ եղել այն զգացումից, թե բնությունը երբեմն որքան շռայլ է լի-

նում իր ընտրյալների նկատմամբ:

Օրբելին մեկն էր դրանցից:

Օրբելուն մանավել չէր կարելի: Դառնալ Օրբելի մույնպես հնարավոր չէր: Պետք էր ծնվել այդպիսին՝ կրելով ապուպապերից եկող ազնվական մի գեն, գունարած նաև տարիների կուտակում և այն, ինչ հայտնի է որպես պետերբուրգյան դպրոց:

Գիտությամբ զբաղվելը համատեղում էր աշխարհիկ կյանքի հետ: Այդ կողմից նա էապես տարբերվում էր մեր շատ հայագետներից: Վերածնունդից մի բան կար Օրբելու մեջ: Մեծ երկրպագու էր ամեն գեղեցիկ բանի՝ լինել բնություն, լինել կին, լինել կերուխումի սեղան: Ինչ-որ գեղեցիկ էր, սիրելի էր նրան, մոտ և ընդունելի...

Սիրում էր երիտասարդներին: Բավական էր՝ մեկի մեջ մի փոքրիկ կայծ տեսներ, կզբաղվեր նրանով, ժամեր կտրամադրեր, բոլոր տեսակի ընդառաջումներ կաներ, միայն թե ասպարեզ ստանա... Նրա կարծիքով սերունդները հաջորդում են միմյանց կորուստներով և ձեռքբերումներով: Ամեն մի եկող սերունդ նախորդի ինչ-որ գծերից հրաժարվում է, բայց իր հետ բերում է մտածողության և հոգեբանության այնպիսի կողմեր, որ չի ունեցել նախորդ սերունդը և չէր էլ կարող ունենալ իբրև այլ ժամանակների ծնունդ: Շփվել երիտասարդության հետ, մշահա-

կում է ժամանակի ոգին զգալ և գլխավորը, հոգով երիտասարդ մնալ:

Լուրեր էին տարածվել, թե Աղթամարն ավերված է: Թե ինչպես դա կազդեր հայ արվեստը սիրողի վրա, դժվար չէ պատկերացնել: Հաստատ չգիտեմ, բայց մեզ հասած լուրը հավանական էր համարվում, մանավանդ որ Անիի կառույցներից մի երկուսը երկու ճանապարհորդ գետնին հավասարեցված էին տեսել:

Եվ հանկարծ Օրբելու ձեռքն է ընկնում արտասահմանյան մի հանդես, եթե չեմ սխալվում՝ Լոնդոնում լույս տեսած, որտեղ Թուրքիայից, ավելի ճիշտ Վանից վերադարձած թղթակիցը հողվածի հետ միասին հրատարակել էր տարբեր կետերից իր իսկ լուսանկարած Աղթամարը՝ այդպիսով վկայելով աշխարհին տաճարի կանգուն վիճակը:

Օրբելին, որ դեռևս 1912-ից սկսել էր ուսումնասիրել կղզու հուշարձանախումբը, հասկանալի է, թե ինչ ուրախություն պիտի ապրեր՝ իմանալով, որ տաճարի ավերման մասին տարածված լուրերը ճիշտ չեն:

Չէր կասկածում, որ իր հետ շատերը կուրախանան Երևանում: Եվ օրերից մի օր մի ընդարձակ հեռագիր ստացա, որով շնորհավորում էր հայ արվեստով զբաղվողներին իր ուրախառիթ լուրով:

Խմբագրության կողմից - Ստորև հրապարակում ենք ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի և գրող Արամայիս Սահակյանի հարցազրույցից որոշ հատվածներ, որոնք առավել առնչվում են մեծանուն գիտնականի մարդկային որակներին: Ամբողջական հարցազրույցը տեղ է գտել «Վիկտոր Համբարձումյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)» ժողովածուում («Գիտություն» հրատ., 2008 թ.):

1981 թ. նոյեմբերի 24-ին երկու ժամ զրուցեցի Վիկտոր Համբարձումյանի հետ: Որոշել էի գիտության մասին հարց չտալ: Նրա գիտական գործի մասին շատ է գրվել և դեռ կգրվի: Համբարձումյանը մեր ժողովրդի մեծագույն զավակներից է, մեր գիտական մտքի խորհրդանիշը: Արտաքինից պարզ ու հասարակ մարդ: Պրեզիդենտը խոսում է հանգիստ, մեղմ, մտածելով և ընտրելով բառերը:

-... տիեզերքում, բացի երկրից, կյանք կա՞:

- Ես համոզված եմ, որ կա, տիեզերքը մի մեծ օրգանիզմ է, և անհնար է, որ օրգանիզմի մի փոքրիկ մասնիկում (երկրում) կյանք լինի, ուրիշ մասերում՝ ոչ: Իհարկե, կյանքի ձևերը կարող են տարբեր և հակասական լինել: Չէ՞ որ տիեզերքը դեռ քիչ է ուսումնասիրված: Այնտեղ միլիարդավոր գալակտիկաներ կան, միլիարդավոր աստղեր, միլիարդավոր երևույթներ, չուսումնասիրված մոլորակներ: Մենք աշխարհը և տիեզերքը ընկալում ենք մեր հինգ զգայարաններով, բայց չէ՞ որ կարող են լինել բաներ, որոնց ընկալման համար զգայարաններ չունենք:

-Իսկ ի՞նչ է մարդը տիեզերքում:

-Եթե գիտականորեն և բանաստեղծորեն ասենք, մարդն էլ մի տիեզերք է տիեզերքում...

-Այդ դեպքում ի՞նչ կասեք հոգու անմահության մասին:

-Ես հավատում եմ մտքի և գործի անմահությանը, օրինակ՝ Նյուտոնը չկա, բայց նրա միտքն անմահ է, Մաշտոցը չկա, բայց նրա գործն անմահ է:

-Ուրեմն՝ ո՞րն է կյանքի իմաստը:

-Մտքով և գործով կյանքին օգտակար լինելը: Դժբախտ եմ այն մարդիկ, որոնցից լավ բան չեն սպասում: Դժբախտ եմ, ովքեր կյանքին ոչինչ չեն տալիս: Աշխարհն էլ կործանվի՝ միայն իրենց ոչինչ չլինի: Ով իր անձնական շահի մասին է մտածում, նրա կյանքը զրկվում է մեծ իմաստից:

-Հետաքրքիր է իմանալ, թե արվեստի

ՄԱՐԴՆ ԷՆ ՄԻ ՏԻԵԶԵՐՔ Ե ՏԻԵԶԵՐՔՈՒՄ...



որ ծյուղն եք հատկապես սիրում:

- Ամենից շատ ... պոեզիան, պաշտում եմ հատկապես Սայաթ-Նովային, Թումանյանին, Պեշկոպշյանին, Տերյանին, Զարեմցին: Ռուս բանաստեղծներից՝ Պուշկինին, Տյուտչևին, Բլոկին: Նրանք բոլորն էլ սրտից են խոսել: Իսկ ով սրտից է խոսում, սրտում էլ կմնա...

-Ի դեպ, Ձեզ մոտ ի՞նչ հարաբերության մեջ են սիրտը և միտքը: Այսպես ասած՝ ո՞վ է ում հաղթում:

-Շատ կուզեմայի, որ միտքս հաղթեր, բայց հաճախ հաղթում է սիրտս: Իհարկե, առանց մեկի չկա մյուսը: Սակայն լինում են պահեր, երբ, ասենք, գիտեմ, որ այսինչը գիտական մեծ շնորհ չունի, բայց սիրտս ասում է, որ ընտանիքի, երեխաների տեր է, օգնի:

-Գիտության մեջ Դուք հաճախ եք հասել անսպասելի արդյունքների և հայտնագործությունների: Արդյոք հակառակորդներ չե՞ք ունեցել:

-Շատ: Երբ նոր գաղափարը ծնվում է, սկզբում ունի միայն մի կողմնակից՝ հեղինակը: Օրինակ, երբ Բյուրականում ծնվեց գալակտիկաների կորիզների ակտիվության գաղափարը, աշխարհի գիտնականներից շատերը չէին ընդունում: Հետո ընդունեցին: Ընդհանրապես ով դեմ չունի, նա անդեմ մարդ է...

- Դուք երբևէ չե՞ք սխալվել, որի համար այսօր զղջում եք:

- Երիտասարդ տարիներին հրատարակել եմ 3-4 գիտական աշխատություններ, ո-

րոնց համար զղջում եմ: Երևի շտապում էի: Մարդ պիտի այնպես ապրի, որ աշխարհին հրաժեշտ տալուց առաջ չզղջա...

-Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր փառքին:

-Դատարկ բան է, աշխատել է պետք:

-Ի՞նչ է, Ձեր կարծիքով, նախանձի զգացումը:

- Դա երևի «նախ անձը» բառերից է ծագել... Կենդանիների մեջ հատկապես ուժեղ է գոյության պայքարը: Ըստ երևույթին, որոշ մարդկանց մեջ ուժեղ է այդ պայքարում պարտվելու վախը, ուստի տառապում են ուրիշների հաջողությամբ... Այնպես որ նախանձի զգացումը երևի կենդանական բնագոյ է, որ մնացել է մարդու մեջ: Եթե մարդ վեհ և փիլիսոփայորեն նայի կյանքին, երևի կազատվի դրանից: Սև նախանձը քաղցկեղից էլ վատ է...

-Էլ ի՞նչ երևույթներ չեք սիրում:

-Ծուլությունը և անհամեստությունը: Ի դեպ, դրանք փոխկապակցված են: Շահասիրությունը և նյութապաշտությունը: Ոմանք կյանքի միակ նպատակը համարում են դրամ վաստակելը, մույնիսկ դրամով հպարտանալ... Խորշում եմ կաշառակերներից: Ատում եմ նրանց, ովքեր տգետ շահասիրությամբ լքում են հայրենիքը:

-Իսկ ի՞նչ կարծիքի եք սիրո մասին: Կարելի՞ է իմանալ, թե երբ և ով է Ձեր սրտի առաջին սերը:

-Մի՛ գարմացեք, եթե ասեմ, որ իմ սրտի առաջին սերը եղել է գիտությունը: Եվ միշտ նա է մնում: Իհարկե, անհուն գորովանքով եմ սիրում ընտանիքս, կնոջս, չորս զավակներիս, թոռնիկներիս: Ես ծնվել և մեծացել եմ մարդասեր և ազգասեր ընտանիքում: Մանկությանս մի մասն անցել է Վարդենիսում: Պապս այդտեղ է եկել Արևմտյան Հայաստանի Ծաղկոտն գավառից: Հայրս՝ Համազասպ Համբարձումյանը, սովորել է Ներսիսյան դպրոցում, Լազարյան ճեմարանում, Պետերբուրգի համալսարանում, զբաղվել է պոեզիայով, թարգմանել է Բայրոն, Լերմոնտով, Յոնթերս... Իսկ ես հինգ տարեկանից սիրում էի բարդ հաշվումներ կատարել: Բարեբախտաբար ծնողներս երես չէին տալիս ինձ: Սերը սեր, երբեք չպետք է «երես տալ» երեխաներին: Չեմ հիշում՝ թեկուզ մի ծնող գոհ մնա դրանից, բոլորն էլ վերջում զղջում են:

-Իսկ անձնական ի՞նչ ցանկություն ունեք:



-Իմ ցանկությունն է՝ ավելի շատ մասնակցել գիտական միասերի և ավելի քիչ՝ ամեն տեսակ միասերին...

-Ձեր հանդիպած մարդկանցից ովքեր են անմոռաց հուշ թողել:

-Պատանի էի, երբ իր մոտ հրավիրեց Հովհաննես Թումանյանը: Ասում եմ, թե դրանից հետո է գրել «Սիրիուսի հրաժեշտը»: Մեծ բանաստեղծ էր՝ սիրտը բաց, հասարակ, իմաստուն... Այդ տարիներին ինձ օգնել է նաև Ալեքսանդր Մյասնիկյանը: Երախտագիտությամբ եմ հիշում:

- Տարիներ առաջ Երևանից Ձեր ուղարկած դեղամիջոցը Լենինգրադում փրկել է անվանի գիտնական Դմիտրի Մակսուտովին: Հետագայում, կարծեմ, նա ասել է. «Համբարձումյանի սիրտը փրկեց իմ կյանքը»:

-Մարդկային ջերմությունը մույնքան կարևոր է, որքան արեգակի ջերմությունը: Ցավոք, մարդկային ջերմությունն աստիճանաբար նվազում է, մանավանդ դա զգացել եմ արտասահմանում: Պատերազմները սկսվում են այն ժամանակ, երբ սրտերը սառչում են...

-Ի դեպ, մահաբեր նոր զենքերի գյուտերը պատկանում են գիտնականներին...

-Այո՛, բայց գիտնականներից շատերն էլ գյուտեր են անում կյանքի և հողագնդի փրկության համար: Հպարտ եմ, որ Հայաստանում էլ բազմաթիվ մեծ գիտնականներ կան: Ովքեր սիրտ ունեն, պատերազմի դեմ են:

-Եթե նոր զենքերը չվնասեն հողագնդին, ապա, Ձեր կարծիքով, դեռ ինչքա՞ն կապրի մարդկանց երկիրը:

-Կարող եք համոզվել լինել. միլիոնավոր տարիներ կապրի,- վստահ պատասխանեց պրեզիդենտը, և դրանով մեր զրույցն ավարտվեց:



Ցանկանալով իմանալ մեծ գիտնականի սիրո գաղտնիքը՝ Վիկտոր Զամբար-ծումյանին հարցրի.
- Ո՞վ է եղել Ձեր առաջին սերը:
- Գիտությունը,- հանգիստ պատասխանեց գիտնականը:

Գրականագետ Գուրգեն Զովմանի գլխարկը քամին տարավ: Զովմանը երկար նայեց գլորվող գլխարկին և ուրախացած ասաց.
- Լավ էր՝ գլուխս մեջը չէր...

Զոգնած և հուզված վերադարձել էի ժողովից, երբ տղաս ասաց.
- Պետք է շտապ մի տեղ գնանք:
- Սպասիր՝ խելքս գլուխս գա,- ասացի ես:
- Դե ասա՝ հարյուր տարի պիտի սպասեն, էլի,- դժգոհեց տղաս:

Այսօր մեր դպրոց մի գիտնական էր եկել, շատ հետաքրքիր զեկուցում կարդաց, - ասաց մի աշակերտ:
- Դայերե՞ն, թե՞ ռուսերեն, - հետաքրքրվեցի ես:
- Այ, էդ մեկը չեմ հիշում,- անկեղծորեն խոստովանեց նա:

Գիտե՞ք, որ ես էլ եմ բանաստեղծություններ գրում,- ասաց մի հարգելի մի-նիստր,- միայն թե, ափսոս, երգիծական

չեմ, ուստի չեք կարող տպագրել Ձեր հանդեսում:

- Ընդհակառակը, կտպագրենք, - ասացի ես,- չէ՞ որ այն համգամանքը, որ մի-նիստրը, իր բան ու գործը թողած, բանաստեղծություն է գրում, արդեն երգիծանք է...

Բողոքեցի ԶԱՄԻ-ի նախագահին.
- Մեր համերաշխ և առողջ կուլեկտիվը վիրավորված է, որ ոչ մի ուղեգիր չեք տալիս:
- Եվ ճիշտ ենք անում,- պատասխանեց նախագահը,- ուղեգրերը հիվանդների համար են, ոչ թե առողջների...

Մի երիտասարդի ընդունում էի աշխատանքի: Շատ հուզված էր:
- Ամուսնացա՞ծ ես,- հարցրի:
- Իհարկե,- պատասխանեց նա:
- Ուրիշ կանամք հո չե՞ս սիրում:
- Ի՞նչ եք ասում,- շփոթվեց նա,- ես իսկի իմ կնոջը չեմ սիրում:

Շուկայում հինգ կիլոգրամ միրգ էի առնում, բայց մեկ ռուբլի պակասում էր:

«Իսկ եթե մեկռուբլիանոց գիրք տա՞մ», - դիտմամբ հարցրի ես: Վաճառողն արհամարհանքով նայեց ինձ: «Բայց ես այդ գրքի հեղինակն եմ», - ասացի ես: «Է, ինչ անենք, ես էլ այս մրգի հեղինակն եմ», - պատասխանեց մարդը և մի ռուբլու միրգ պակաս տվեց:

Իմ երգիծական բանաստեղծություններից մեկը՝ «Տնաշենի տղա», մի թարգմանիչ ռուսերեն թարգմանել էր «Сын домостроителя»:
- Շնորհակալություն, որ տնաշենարար եք դարձրել հերոսիս, բայց դրանով քանդել եք թարգմանության տունը...,- ասացի ես:

Կնոջս հետ անցնում էի փողոցով: Մի անժամոթ մարդ նրան բարկեց:
- Ո՞վ էր,- հետաքրքրվեցի ես:
- Իմ երեխաներից մեկի հայրն էր,- հանգիստ պատասխանեց կինս:
- Ինչպե՞ս թե...,- զարմացա ես,- եթե չեմ սխալվում, քո երեխաների հայրը ես եմ:
- Իմ աշակերտներից մեկի հայրն էր,- սխալմ իսկույն ուղղեց ուսուցչուհի կինս:

ՇԵՆՐԻ ՔԻՍԻՆՁԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԱՖՈՐԻԶՄՆԵՐԸ



Վերջերս 100 տարեկան հասակում վախճանվեց ԱՄՆ նախկին պետքարտուղար, խաղաղության Նոբելյան մրցանակակիր Զենրի Քիսինջերը: Ականավոր քաղաքական գործչի և դիվանագետի որոշ արտահայտություններ դարձել են աֆորիզմներ, իսկ նրա ինքնատիպ հումորը՝ հեշտ ծանաչելի: Ընթերցողին ենք ներկայացնում դրանցից մի քանիսը.

- Վերահսկելով նավթը՝ դուք կվերահսկեք ամբողջ պետություններ, վերահսկելով պարենը՝ դուք կվերահսկեք ժողովրդին:
- Գիտությունը ԱՄՆ-ին ոչ բարեկամ երկրներում դիտարկվում է որպես ռազմավարական վտանգ ԱՄՆ-ի համար:
- Մեծ տերությունները չեն զոհաբերում իրենց հանուն դաշնակիցների:
- Քաղաքական գործիչների մի ինչ-որ 90 տոկոս փչացնում է մյուս բոլորի վարկը:
- Քաղաքական գործիչները շան նման են: Նրանց կյանքը չափազանց կարճ է, որպեսզի կատարեն ստանձնած բոլոր պարտավորությունները:
- Ճգնաժամային իրավիճակում ամենահամոզված կուրսը հաճախ լինում է ամենամեղմունքը:
- Ամերիկայի թշնամի լինելը վտանգավոր է, Ամերիկայի բարեկամ լինելը՝ ճակատագրական:
- Եթե չգիտեք ձեր ուղու նպատակը, ոչ մի ճանապարհ ձեզ որևէ տեղ չի տանի:

ՄՏԵՂԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ



Թեժ տարիներին Մեծ հայրենականի, Զինված կաճա՝ հզոր, երևելի, Գիտությունների ակադեմիան Զայաստանի Դարձավ խորհրդանշիչը մեր գիտական մտքի:

Գիտնականների փառքն է այստեղ թևածել, Նրանց մտքերը հրաշքներ են գործել, Մի քանի սերունդ է այստեղ արարել, Նրանց շնորհիվ է աշխարհը մեզ ճանաչել:

Անցել է ուղի՝ հարուստ ու պատվաբեր, Իր ճանփին տեսել բազում դժվարություններ, Զինմ էլ են փորձում որոգայթներ լարել Ու անմիտ քայլերով եղածն ավերել:

80- անյա մեր հարազատ Ակադեմիային, Ուզում ենք տեսնել միշտ իր բարձունքին, Որ ծայրը խրոխտ հասնի բոլորին՝ Եղել է, կա՛ ու կմնա՝ Կաճառ ազգային...

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

ԵԳԱՄ-ն ամփոփել է «Գիտության հանրայնացման մրցույթի» արդյունքները

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» ամփոփել է «Գիտության հանրայնացման մրցույթի» արդյունքները:

Մրցույթի նպատակներն են խրախուսել երիտասարդ գիտնականների գործունեության և գիտության բոլոր բնագավառների հետազոտական արդյունքների հանրայնացումը, նպաստել հասարակության մեջ գիտության դերի և նշանակության վերաբերյալ հանրամատչելի պատկերացումների ձևավորմանը և հանրության լայն շրջանակներին իրազեկմանը:

Մրցույթի շահառու են ճանաչվել.

● Զարուհի Զովեյանը (Զայաստանի ազգային ազարային համալսարան)՝ «Լուսավոր երիտասարդների բացահայտումը սոցիալական ցանցերի միջոցով» նախագծով,
● Աննա Սահակյանը («Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ԶԿ)՝ «Լաբորատորիայից ներս» նախագծով,
● Զարա Խաչատրյանը («Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ԶԿ)՝ «Գիտաբուք» երիտասարդ գիտնականների հետ» նախագծով,

● Տիգրան Զալինյանը (Երևանի պետական համալսարան), ով կիրականացնի գիտահանրամատչելի բովանդակությամբ, մարդկության զարգացման գործընթացում կրթության, գիտության և տեխնոլոգիաների դերն ու կարևորությունը ներկայացնող հոլովակների հայերեն հնչյունավորում և կատարաստի հեղինակային հոլովակներ,
● Շուշանիկ Ղազարյանը (ռուս-հայկական համալսարան), ով կնշակի կենսատեխնոլոգիական առցանց/տեղա հարթակների ստեղծման ռազմավարություն:

Ամենամեծ հոտավետ ծաղիկը

Տիտան Արունն աշխարհի ամենամեծ հոտավետ ծաղիկն է, որն աճում է ինդոնեզական Սումատրա կղզու ջունգլիներում: Այս ծաղկի «բույրը» ամենահոտեղի չէ. ծաղկին մոտենալիս մարդիկ զգում են հոտած ձկան և փտած սննդամթերքի հոտ: Զոտի պատճառով Տիտան Արունն անվանել են «Մեռած ծաղիկ»:

Այս բույսը ծաղկում է 10 տարին մեկ անգամ: Ծաղկելու օրը մեծ տոնախմբությամբ է նշվում Ինդոնեզիայում: Ծաղկելու ժամանակ ծաղկի բարձրությունը հասնում է 3 մետրի, տերևների երկարությունը՝ 6 մետրի:

Ամենամեծ ջութակը

Աշխարհի ամենամեծ ջութակը պատրաստել են Գերմանիայի Ֆոգտլանդ քաղաքի վարպետները: Զութակի երկարությունը 4,27 մետր է, լայնությունը՝ 1,37 մետր: Գործիքը 7 անգամ մեծ է բնօրինակից, և այն նվագելու համար հատուկ այդ ջութակի համար պատրաստված փայտիկը 5,18 մետր երկարություն ունի:

Այդ երաժշտական գործիքը նվագելու համար անհրաժեշտ է երեք մարդ: Մեկը բռնում է գործիքը և սեղմում լարերը, իսկ մյուս երկուսը շարժում են իսկա փայտիկը:

Ամենաերկար ավտոբուսը

Գերմանիայի Դեբզեն քաղաքում հայտնվել է աշխարհի ամենաերկար ավտոբուսը: Ստեղծողներն այն անվանել են «ավտոտրամվայ»: Երկարությունը՝ 30 մետր է, լայնությունը՝ 2,55 մետր, բարձրությունը՝ 3,4 մետր: Ավտոբուսը կարող է միաժամանակ 256 ուղևոր տեղափոխել:

Բացի նրանից, որ այս ավտոբուսն ամենամեծ հանրային ուղևորափոխադրողն է, դրա ստեղծման ժամանակ հաշվի են առնվել նաև բնապահպանական մի շարք հարցեր:

Ավտոբուսի շարժիչը հոսանքով է աշխատում, ինչի շնորհիվ ավտոբուսը 8 կմ կարող է ընթանալ լիցքավորված մարտկոցների հաշվին:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ԶՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 25.12.2023 թ.:

"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА